



# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՎԸ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՐԱՆԳԻԵՐՈՒ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՍԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHÉGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



Աշ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՎԻ ՏԻԿՆԱՅԻ ՕԺԱՆԴԱԿ ՄԱՐՄԻՆԻ  
ԿԱՇԱՎԿԵՐՊՈՒԹԵՎԱԲ

## ՀԱՅ ԿՆՈՉ ՏԱՐՈՒԱՆ ՆՈՒԵՐՈՒԱԾ ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԶԵՌՆԱՐԿ՝ ԱՇ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՎԻ ՄԵԶ

Ազգային Առաջնորդարանի Տիկնայի Օժանդակ Մարմինը Հինգշաբթի, 15 Ապրիլի կեսօրեն, Ազգ. Առաջնորդարանի «Տիգրան Եւ Զարուհի Տէր Ղազարեան» սրահին մէջ կազմակերպեց դասախոսական ձեռնարկ մը, որ յաջորդեց ճաշի հիւրընկալումի: Ձեռնարկը նոյնօրինակ երկրորդ հանդիպումն էր, նուիրուած՝ «Հայ Կնոջ Տարուան», եւ կը վայելէր թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. S. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի հովանաւորութիւնն ու ներկայութիւնը:

Աւելի քան հարիւր տիկիններ մասնակից եղան ձեռնարկին: Առաջնորդ Սրբազնը կատարեց սեղաններու օրինութիւնն ու հակիրճ կերպով անդրադարձաւ առիթին, գևահատելով S. O. Մարմինի անդամները, որոնք ահաւասիկ երկրորդ անգամ ըլլալով կը կազմակերպէին ձեռնարկ մը, որ հաճելին կը միացնէր օգտակարին:

S. O. Մարմինի ատենապետուիի Տիկին Մարիամ Կարապետեան, բացման իր խօսքին մէջ, ողջունեց բոլոր ներկաները, որոնց կարգին են տիկնայի միութեանց անդամներ, ՀՕՄակակներ, գլխաւորութեամբ Շրջ. Վարչութեան ատենապետ Տիկին Սոսի Փօլատեանի: Ան յիշեցուց, որ ՀՕՄ այս տարի կը տուն իր 100ամեակը, հետեւաբար, բարի երթ մաղթեց ՀՕՄին, իր երկրորդ հարիւրամեակի սեմին:

Ճաշէն ետք, Տոք. Իստ Գարայեան տուաւ շահեկան եւ օգտաշատ դասախոսութիւն մը, իբրեւ գլխաւոր նիւթ ունենալով «Հայ Կնոջ դերը՝ զաւակներու դաստիարակութեան մէջ»: Ան առաջին հերթին վեր առաւ մանուկին հիմնական կարիքները, բնականոն աճումի համար. անոնք են բնախոսական տարրական պէտքերը, ապահովութեան զգացումը, շրջապատին հետ ներդաշնակուելու եւ յարաբերելու պահանջը, ապա նաեւ գեղագիտական մղումները: Ան անհրաժեշտ նկատեց, որ մայրեր օգնեն իրենց զաւակներուն, որպեսզի կեանքի նպատակակետ ու տեսլական ունենան, զարգացնեն ընտանիքին ու շրջապատին հետ յարաբերելու յատկութիւնը, քայլ պահեն արագօրէն զարգացող աշխարհին հետ, իրենց պատկանելիութեան համար ունենան հպարտութեան զգացում ու

դաստիարակութին հաւաքական ժառանգութիւններով, եւ վերջապէս, հոգ տանիլ, որ ընտանիքը, հայ ընտանիքը մօտիկ զլայ եկեղեցւոյ, զլայ հաւատացեալ:

Յանդիպումին եզրափակիչ խօսքը արտասանեց Առաջնորդ Սրբազնը: Ան բարձր գևահատեց Տոքը. Իտա Գարայեանի ներկայացուցած գաղափարներն ու թելադրանքները, ապա նաեւ արձագանգելով յիշեալ կետերուն, անհրաժեշտ նկատեց, որ հայ մայրն ու հայ կինը տէր կանգնին մեր արժեքներուն, իրեւց զաւակներուն խօսին յատկապէս հայկական արժեքներու մասին, զարգացող աշխարհի մէջ մանուկները ուղղեն դեպի օգտակարն ու մնայունը, շեշտել հայութեան պատկանելիութեան զգացումն ու հայութեամբ հպարտանալու կարեւորութիւնը, եւ վերջապէս, մանուկին ու պատանիին մէջ սերմանել Աստուծոյ սերը, Աստուծոյ պատկերին համաձայն ստեղծուած զլալու մարդուն յատկանիշները: Առաջնորդ Սրբազնը շեշտեց, որ հայ կինը՝ մայր, դաստիարակ թէ ընտանիքի կառավարիչ՝ կը հանդիսանայ ընկերութեան ու ազգին սիրուն ու հոգին:

Զերսարկի աւարտին, Առաջնորդ Սրբազնը յուշանուեր մը յանձնեց յարգելի բանախօսին:

## **"YEAR OF THE ARMENIAN WOMAN" SECOND LITERARY LUNCHEON HELD AT THE PRELACY**

In celebration of the "Year of the Armenian Woman" as proclaimed by H.H. Catholicos Aram I, the Prelacy is organizing a number of events throughout the year to honor the Armenian woman and her role and contributions to our nation. Among these is a series of literary luncheons organized by the Prelacy Ladies Auxiliary under the auspices of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate.

The second of these luncheons took place on the afternoon of Thursday, April 15<sup>th</sup>, 2010, at the Prelacy "Dikran and Zarouhie Der Ghazarian" Hall.

The event began with the invocation by the Prelate.

Ladies Auxiliary Chair Mrs. Mariam Karapetian welcomed the guests, among whom were Ladies Guild members from various Prelacy Churches and community representatives, such as Chairlady of the A.R.S. Regional Executive Mrs. Sossi Poladian. Given that the A.R.S. is celebrating its centennial this year, Mrs. Karapetian congratulated the organization and wished them success as they embark on the next hundred years.

The keynote speaker was psychologist and marriage and family therapist Dr. Ida Karayan, who gave a presentation on the role of Armenian woman in childhood education. Dr. Karayan first outlined the basic needs of all children. She went on to stress the importance of Armenian mothers helping their children form their ideals and purpose and developing strong ties with family and community, teaching them skills to keep up with the fast pace of life, instructing them on our faith, heritage and national values, and working to ensure that they develop a bond with our church and community.

The event closed with the Prelate's message. The Prelate commended Dr. Karayan for her informative presentation and suggestions, and reiterated her message that Armenian mothers must instill in their children our values, virtues, and pride in belonging to the Armenian nation, and cultivate in them love for God and our church. He concluded by affirming that the Armenian woman, whether a wife, mother, or educator, is the heart and soul of our nation.

At the conclusion of the event the Prelate presented Dr. Karayan with a memento.